

ՈՍԿԻ ՍԱԿԱԳԻՆԻ ՄՐՑԱՆԻԺ

Ոսկիի սակագինը երեկ գրանցեց պատմական մրցանշային նոր բարձունք՝ հասնելով 2450,06 ամերիկեան տոլարի՝ 1 ուսի դիմաց: Կը կարծուի, որ 1,5 առ հարիւրի հասնող նորագոյն գնաճին գլխաւոր պատճառներու շարքին են ուռճացումի դանդաղ ընթացքը Միացեալ Նահանգներու մէջ: Նշենք, որ արծաթին գինը եւս հասած է մրցանշային կետի:

ԹՐԲԱԿԱՆ ՁԷՆՔ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Լիբանանեան ապահովական յաջորդական մտահոգութիւններու ծիրին մէջ, անցնող երկու օրերուն լուսարձակներու տակ յայտնուեցան թրքական զէնքեր Լիբանան փոխադրելու փորձերը: Առաջին բացայայտումը պատահաբար կատարուեցաւ երկուշաբթի օր, երբ հրդեհ բռնկեցաւ Պաթրոնի մայրուղիին վրայ, Պէյրութի ուղղութեամբ



ընթացող թրքական բեռնակառքի մը մէջ, որ Լիբանան հասած էր Թրիփուլի նաւահանգիստէն: Շուտով, հրդեհը մարելու նպատակով ժամանած քաղաքացիական անվտանգութիւնն ու ապահովութեան ուժերը բացայայտեցին ձեռք փոխադրող բեռնակառքին մէջ պահուած աւելի քան 300 թրքական ատրճանակ: Շուտով տարածուած տեղեկութիւններ նշեցին, թէ ապօրինաբար փոխադրուած բեռը ուղարկուած էր հարաւի Միջ ու Միջ գաղթականային մէջ գտնուող պաղեստինցիի մը:

Լիբանանեան բանակի հրամանատարութիւնը յայտարարեց այս հարցով քանի մը կասկածելի ձեռքարկութիւններ եւ Թրիփուլի հասած թրքական յաւելեալ նաւերու մասնազանտումը: Իսկ երեկ յայտարարուեցաւ, որ Լիբանան հասած վեց բեռնակառքերու մասնազանտումին ընթացքին կարելի էր բացայայտել 400 թրքական ատրճանակ:

Գրուուած զէնքերը տրամադրուեցան բանակին, դատական համապատասխան մարմինները բացին հետաքննութիւն, իսկ ապահովական կառոյցները չեն բացառեր, որ Թրիփուլի հասած զէնքի նման ապօրինի այլ բեռներ յաջողութեամբ դուրս բերուած ըլլան նաւահանգիստէն:

ՅԱՐԳԵԼ ԼԻԲԱՆԱՆԻ ԳԵՐԻԾՆԱՆՈՒԹԻՒՆ

Արտաքին գործերու նախարարի պաշտօնակատար Ապտալա Պու Ռապիպ երեկ ընդունեց իր իրանական



պաշտօնակից Մայքըլ Մարթինը, որուն հետ քննարկեց Կազախի զարգացումներն ու երկկողմանի յարաբերութիւններու ամրապնդումը: Դրուանումը Լիբանանին գորակցող իրանական կեցուածքները, Պու Ռապիպ յանձնառութիւն յայտնեց Եունիֆիլի խաղաղապահ ուժերու անվտանգութեան: Իսկ ՄԱԿի տեղահանուածներու հարցերը հետապնդող գործակալութեան ներկայացուցիչին հետ տեսակցութեան ընթացքին նախարարը պահանջեց յարգել Լիբանանի պետական հաստատութիւններուն հետ հաղորդակցութեան կարգերը եւ լիբանանեան օրէնքներն ու գերիշխան որոշումները, որոնք կը կազմակերպեն երկրին մէջ սուրիացի տեղահանուածներուն ներկայութիւնը:

Իսկ սուրիացիներուն տունդարձը պահանջող լիբանանեան ազգային շարժումի ընդհանուր համակարգող Պասսամ Խաուլի կոչ ուղղեց լիբանանեան հողերէն վտարել գաղթականներու հարցերով զբաղող ՄԱԿի գործակալութեան Լիբանանի յանձնակատարը, աւելցնելով, թէ վնաս հասցուցած է Լիբանանի գերիշխանութեան, երբ ներքին գործերու նախարարէն պահանջած է վերջ տալ ապօրինաբար Լիբանան գտնուող սուրիացիները ստիպողաբար Սուրիա վերադարձնելու արշաւին: «Այս հողը մեր հողն է, մեր գերիշխանութիւնն ու մեր պետութիւնը, հետեաբար ան իրաւունք չունի գտնել իր քայլերուն արդարացումը», ըսաւ Խաուլի, յիշեցնելով, թէ 2003-ին Լիբա-



նանի եւ ՄԱԿի միջեւ այս հարցով կնքուած համաձայնութիւնը շատ յստակ է:

Հիւսիսի նահանգապետ Ռամզի Նոիրա յայտարարեց, թէ իր իրաւասութեան տակ գտնուող շրջաններուն մէջ ապօրինաբար բնակող սուրիացիներուն դէմ պայքարը պիտի շարունակուի, հակառակ ձեխարծակումներու արշաւին: «Այս հարցով խնդիրն կ'ըստ կը վերաբերի այն լիբանանցիներուն, որոնք կ'օգտուին ապօրինաբար լիբանան գտնուող տեղահանուածներու ծառայութիւններէ», ըսաւ Նոիրա, աւելցնելով, թէ որոշ գիւղերու մէջ կայ ընդամենը հինգ հարիւր լիբանանցի եւ աւելի քան 1500 սուրիացի: Խօսելով Տըստէ գիւղին մէջ փակուած գաղթականային մասին, Նոիրա յայտնեց, թէ անոր բնակիչներուն մէկ մասը վերադարձած է Սուրիա, իսկ մնացեալը՝ Լիբանանի այլ շրջաններ:

ԻՍՐԱԷԼԵԱՆ ԶԱՐՈՒԾՆԵՐ



Իսրայէլեան բանակի բանբեր Աւիխայ Ատրխաի յայտարարեց, թէ օդուժը նախանցեալ օր Սուրի շրջանին մէջ թիրախաւորած է սպաննած Է Զըզալլայի հրթիռային

(Ծառ.ը տեսնել 2րդ էջ)

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՐԱՆԻ ՄԷՋ

Իրանի մէջ երեկ սկսաւ նախագահ Իպրահիմ Ռայիսիի, արտաքին գործերու նախարար Զըքէյն Ամիր Ապտալլահ-իան եւ անոնց ընկերակիցներուն յուղարկաւորութեան արարողութիւնը: Նշեալ պատասխանատուները մահացած էին օր մը առաջ ուղղաթիռի ջախջախումի պատճառով, որ տեղի ունեցաւ երկրի հիւսիսային Արեւելեան Ատրպէյ-



ճանի նահանգին մէջ: Արարողութեան առաջին հատուածը կատարուեցաւ Նոյն նահանգի Կեդրոնին՝ Թավրիզի մէջ, ապա զոհերուն մարմինները փոխադրուեցան Զոմ ու վերջապէս Թեհրան, ուր աղօթեց յեղափոխութեան հոգեւոր առաջնորդ ալայաթլա Ալի Խամենէին, իսկ թաղումի արարողութիւնները պիտի կատարուին այսօր՝ իւրաքանչիւրը իր ծննդավայրին մէջ:

Նշենք, որ Ռայիսիի մահուան գծով Թեհրանին ցաւակցած պետութիւններու շարքին է Միացեալ Նահանգները: Արտաքին գործերու նախարարութիւնը այս գծով իր գորակցութիւնը յայտնեց իրանցիներուն եւ նշեց, որ Թեհրանի իշխանութիւնները օգնութիւն հայցած էին Նաեւ Միացեալ Նահանգներէն:

ԿԱԶԱՅԻՆ ԶԱՄԱՐ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՌԱՋԱՐԿ



Իսրայէլեան լրատուամիջոցներ հաղորդեցին, թէ Միացեալ Նահանգներու նախագահութեան ազգային անվտան-

26 ՄԱՅԻՍԻՆ ԲՈՂՈՔԻ ՆՈՐ ՓՈՒԼ

Հայաստանի մէջ բողոքի շարժումներ կազմակերպող «Տաւուշը յանուն հայրենիքի» շարժումի առաջնորդ Բագրատ Արք. Գալստանեան յայտարարեց, թէ 26 Մայիսին պիտի սկսի շարժումին երրորդ փուլը, ուստի ժողովուրդը հրաւիրեց Հանրապետութեան հրապարակին վրայ կայա-



նալիք հանրահաւաքին, խոստանալով անոր ընթացքին տալ շարք մը հարցերու պատասխաններ: Խօսելով վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաժարականի պահանջին մասին, Բագրատ Սրբազան նշեց, թէ Փաշինեան պարզապէս այլընտրանք չունի: Զաղաքագետներու, վերլուծաբաններու եւ հասարակական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ երեկ ունեցած տեսակցութեան ընթացքին ան նշեց, թէ կարելի չէ չեզոք մնալ այսօր: «Մարդ կամ պիտի յարմարի սուտի իրավիճակին հետ, կամ ընդվզի», ըսաւ Սրբազանը: Իսկ Արցախի կառավարութեան, Ազգային ժողովի ներկայացուցիչներուն եւ հասարակական գործիչներու հետ տեսակցութեան ընթացքին Սրբազանը վստահութիւն յայտնեց, թէ Արցախ վերադարձ պիտի ըլլայ:

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՐԱՆԻ ՄԷՋ

գութեան հարցերով խորհրդական Ճէյք Սալիվըն իսրայէլեան կառավարութեան ներկայացուցած է Կազախի պատերազմին վերջ տալու առաջարկ, որ կը ներառէ Մեւտական Արաբիոյ հետ յարաբերութիւններու բնականոնացում, ամերիկեան ապահովական աջակցութիւն եւ տարածաշրջանային նոր դաշինքի յայտնութիւն՝ ընդդէմ Իրանին: Ուաշինկթըն առաջարկին մէջ կը խոստանայ Նաեւ ներդրումներ կատարել Կազախի մէջ ու կ'առաջարկէ, որ Իսրայէլ պատրաստակամութիւն յայտնէ քննարկելու երկու պետութիւններու լուծումը: Իսկ Իսրայէլի վարչապետ Պէնիամին Նեթանիահու նշեց, թէ պատերազմէն ետք Կազախի տնօրինումը պէտք է ստանձնեն տեղացի պաղեստինցիներ, որոնք առնչութիւն չունին Համասին հետ:

Շարունակելով լրատուամիջոցներուն դէմ պայքարը, Իսրայէլի իշխանութիւնները արգիլեցին ամերիկեան Associated Press գործակալութեան գործունեութիւնը եւ գրաւեցին սարքաւորումները, Ալ-ժազիրա ցանցին հետ համագործակցութեան պատճառով:



Համասի գիւնեալ թեւ «Զասսամ» երեկ յայտարարեց, թէ իսրայէլեան բանակը գիւնուորներ կորսնցուցած է Կազախի հիւսիսային Թել Զաաթար շրջանին մէջ համարուած պաղեստինեան յարձակումի մը ընթացքին:



Այսրորդանանի մէջ պաղեստինեան առողջապահութեան նախարարութիւնը յայտարարեց, թէ Ժընիւ քաղաքին մէջ գործադրուած իսրայէլեան գործողութեան ընթացքին զոհուած է առնուազն 7 հոգի, բազմաթիւ իրաւորներու կողքին, որոնց շարքին են դպրոցական աշակերտներ եւս:

(Ծառ.ը տեսնել 4րդ էջ)

ՄԵԾԱՄԱՆԻՔԻ ԼՆԴՐԱԴԱՐՃ

Թիւ 25

«Երեխաները աշխարհի ամենաարժեքաւոր պաշարն են եւ ապագայի ամենալաւ յոյսը»:
Ընն Ֆ. Զենըտի, ԱՄՆ-ի Նախկին Նախագահ

Վերջին տարիներուն աշխարհի ականատես կը դառնայ մարդկային արժեքի անկումին: Ընկերութեան անպաշտպան դասակարգը, որ կը բաղկանայ ծերունիներէ, կիներէ եւ երեխաներէ ու ընչազուրկ մարդոցմէ, շատ անգամ կ'ենթարկուի շահագործումի: Կրօնքը այն աստ-լածահաստատ համակարգն է, որ կը հաստատէ Մարդուն արժեքը: Մարդը արժեք է Արարիչին համար: Սուրբ գիրքերը ամենամեծ վկաներն են այդ իրականութեան: Մարդը որքան կը հեռանայ Արարիչի բնութեան օրէնքէն, այնքան կը մօտենայ Բարիի բացակայութեան ու իր եղբայրը կամ քույրը շահագործելու կարելիութեան: Մարդուն արժեքը միայն կը գտնուի Արարիչի համակարգին մէջ: Անկէ դուրս Մարդը Մարդուն համար թիւ է միայն: Այն Մարդը որ հեռու է Եկեղեցիէն ու կրօնքէն կրնայ գործել ամեն բան, որովհետեւ թիւ կը տեսնէ իր եղբայրը կամ քույրը:

Մանուկներու, երեխաներու, կիներու շահագործումը կամ Մարդուն շահագործումը ընդհանրապէս մեծ թափ ստացած է նոր արհեստագիտութեան այս դարուն: Մարդուն շահագործումը Մարդուն կողմէ հասած է անտանելի սահմանին: Այս ինչ նիւթապաշտ, անմարդկային համակարգ մըն է որ կը սկսի ձեւաւորուիլ Եկեղեցիէն ու կրօնքէն հեռու: Մարդիկ խիղճը փոխարինած են անտարբերութեամբ: Նիւթական շահի ակնկալութեամբ անտարբեր դարձած Մարդը շատ հեռու է Արարիչէն ու բնութեան սիրոյ ու լոյսի վրայ հիմնուած համակարգէն: Այս մարդոց համար երախտն թիւ մըն է, անհոգի, անարժեք: Հակառակը ինչպէ՞ս կարելի է բացատրել: Ինչպէ՞ս անողորմ մարդիկ իրենց խիղճը կը ծախեն քանի մը լումայի փոխարէն երեխաներու անմեղութիւնը շահագործելով: Բիրտ համակարգ մը որ պետք է ենթարկուի ամենաճանր պատիժին, որպէսզի չկրկնուին դուրսէն ներսը ծնունդ աշխարհի անմարդկային արարքներ: Մարդը արժեք է ու վերջ: Այս օրէնքը խախտողը անմարդկային էակ է ու անողորմ ենթակայ պատիժի:

Պէլճիքացի գեղանկարիչ Փիթըր Պրիւկը, հայ գրող Յովհաննէս Թումանեան եւ անգլիացի գրող Զարլզ Տիքընզ հիւրերն են մեր այսօրուան «Մշակոյթի Անդրադարձ»ին: Այս ստեղծագործող մարդիկ շատ բան տուին մեզի, Աշխարհի մշակոյթին: Անոնք իրենց կեանքով եւ գործով փաստեցին, որ մարդը արարողն է, աշխատողը ու իր գործով հաւասարակշռողն է տիեզերքին: Անոնք կոչ ուղղեցին յարգելու գիւղացիին աւանդութիւնները, արժեքը, յարգելու կիւք որպէս քոյր եւ մայր ամեն յարգանքի արժանի, յարգելու Նաեւ երեխաները ու անոնց տրամադրել հաւասարակշռողն է պայմաններ առանց շահագործումի: Տիեզերքի օրէնքին հիմը հաւասարակշռութիւնն է ու յարգանքը, սերը: Այս է այն պատուերը, որ կու գայ մեզի բոլոր կրօններու պատուիրաններէն:

ԳԵՂԱՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ

ՓԻԹԵՐ ՊՐԻԻԿԸԼ ԿՐՏՍԵՐ (1564 - 1638)

Փիթըր Պրիւկը պելճիքացի գեղանկարիչ է Վերածնունդի շրջանի: Անոր գեղանկարները կը յատկանշուին իրենց պարզութեամբ ու գեղջուկ ժողովուրդի կեանքը ներկայացնող իրենց գեղեցկութեամբ:

Կանուխ տարիքէն կորսնցուցած է իր ծընողը: Մեծ մայրը հոգացած է իրենց կրթութիւնը: Մեծ մայրը Mayken Verhulst այն



անձն էր, որ իրեն ապահովեց արուեստի կրթութիւն ու Պրիւկը իր առաջին քայլերը առաւ դէպի արուեստի գեղեցիկ աշխարհը:



Պրիւկը Կրտսեր Նկարեց գիւղը, գիւղացիին համեստութիւնը, վեճերը, կեանքը, եկեղեցական արարողութիւնները: Ան ներկայացուց գիւղը եւ գիւղացին իրենց կեանքի բոլոր մանրամասնութիւններով:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ (1869-1923)



Յովհաննէս Թումանեան արեւելահայ արձակի մեծերէն է, համեստ մարդու կեանքը եւ բնութեան գեղեցկութիւնը ներկայացնող արձակագիրը: 20-րդ դարու սիրուած արձակագիրն էր ան:

Իր հայրենակիցները ապրեցան Թումանեանով: Ան իրաւամբ գիւղական կեանքը ներկայացնող, կեանքի, բնութեան եւ սիրոյ արձակագիրն էր: Թումանեան ծնած է բնութեամբ հարուստ Լոռիի Դսեղ գիւղը: Շրջանը իր բնական գեղեցկութեամբ, զուլաւ աղբիւրներու յստակութեամբ կերտած է անոր ներաշխարհը, դիւթած է զինք: Համեստ գիւղացին հմայած է զինք ու դարձած իր շատ մը երկերուն առաջին կերպարը: Ան հասկ առած է շրջանի մը մէջ որ իւրայայտուկ էր իր բնութեան թովջութեամբ եւ ուներ գեղջուկ ու շինական հասարակութեան խորապէս աշուղական հոգեկան աշխարհի գաղտնիքները:

Յովհաննէս Թումանեանի արձակին յաջողութեան հիմնական պատճառներէն մէկը իր պարզութիւնն է, հաղորդականութիւնը, անմիջականութիւնը: Պարզ են իր բառերը, հասկնալի, բայց ունին վսեմութիւն, խորք, կեանքի փիլիսոփայութիւն:

Թումանեան միշտ եղած է համեստ մարդը Նկարագրող մեր մեծ մարդասերը: Ան Նկարագրած է մեր լեռները, գիւղացիները եւ անոնց համեստ ու մարդկային նիստուկացը: «Լեռների հովիւ» կը Նկարագրէ Սասունի լեռներուն մէջ ապրող հովիւ մը ու անոր կեանքէն ցաւակի դրուագ մը: Հովիւը բնութեան զաւակն է: Ան է որ գիտէ բնութիւնը եւ երբ մարդոց կողմէ ծաղրանքի ենթարկուի, բնութեան եւ իր հօտին մէջ կը գտնէ իր ցաւերու դարմանը:

ԼԵՈՆՏԵՐԻ ՀՈՎԻԷ

Լեռներ... բարձր ու կանաչ լեռներ, դուք հայրենիքն ու գահը զով գեփիւռների, անուշաբոյր ծաղիկների, սուրբ ցողերի ու շաղերի, անմահական սառն աղբիւրների, սեսեսեւ ամպերի, հրեղէն կայծակների, ջրեղէն տարափների...



Դո՛ւք - մօտիկ աստծուն, աստղերին, լուսնին, երկնային շնորհքներին ու գաղտնիքներին, վեհ ու վեհապանծ լեռներ...

Եւ ո՞վ է հողեղէններից այնքան ձեզ նման հպարտ, հզօր, վեհանձն ու մաքուր, որքան ձեր հարազատ որդեգիրը, ձեր մրդիկների ու գեփիւռների, ծաղիկների ու կայծակների ծնունդը, ձեր պահած ու փայփայած հովիւը:

Լեռների հովիւ՛նք անծանօթ ու խորթ կեանքի սրտամաշ հառաջանքներին, գետնաքարշ արարքներին, հացկատակ խաղերին ու տաղերին, հպարտ ու զուարթ, որպէս այդ ձեր վայրենի ծաղիկները:

Բայց ձեր վայրենի ծաղիկներն էլ իրանց բոյրով-հրապոյրով ընկնում են ձանր ու կոպիտ ոտների տակ եւ ապականում, ցեխ դառնում:

Քաղաքում՝ բարձրաշարկ տան բակում, իւր սրինգն

ածում ու պար էր գալիս մի բարձրահասակ, թիկնաւետ երիտասարդ: Նրա հագին բազմատարագ շորերի ցնցոտիներ էին, գլխին՝ ծանր քրդի քուլոգ:

Չուարթ էր նրա հովուական սրնգի ձայնը, ուրախ էր պարի եղանակը, աշխոյժ էր եւ պարը, միայն տխուր էին թուխ, կրակոտ աչքերը, որ երբեմնակի նայում էին վերեւ: Նրանք երբեմնակի նայում էին վերեւ, երեւի տեսնելու, թէ օքմի՞ն կայ պատշգամբներում, թէ չէ: Նայում էին, սակայն չէին աղերսում...

Տխուր էր եւ նրա առնական դէմքը իւր շիկասեւ, նորածնի շրջանակի մէջ, ուր նշանաւոր էին արծուի քիթն եւ ուռած շրթունքները: Եւ նա ինքն ամբողջ մի մարմնացած վայրենի վիշտ էր, բայց իւր սրինգն ածում ու պար էր գալիս:

Նրա հնամաշ շորերի ծործորը թռչկոտելով դիպչում էին բարձր ազդրերին ու բաց սրունքներին, յօրինելով մի ծիծաղաշարժ տեսարան, որ սաստիկ վիրաւորում էր նրա հզօր կերպարանքն ու դառն տխրութիւնը:

- Քուրտը, քուրտը... - աղաղակեցին երեխաները, եւ տանցքիք նոր ճաշերն աւարտած, թմփթմփալով սրնգի ձայնին դուրս եկան պատշգամբը, նայելու աղքատ քուրտին:

Անելի ոգեւորուած՝ քուրդը կրկնապատկեց եռանդը, աշխատում էր ցոյց տալ իւր բոլոր շնորհքը զանազան ծամածռութիւններ ու խեղկատակութիւններ անելով...: Եւ նա հասնում էր իւր նպատակին, վերելից հրճուում, ուրախ կըրկըչում էին:

Բայց նրանցից ոչ ոք չէր մտածում, թէ ինչու ինքը՝ պարողը, չի ուրախանում, ինչու մենակ նա է տխուր...

Եւ ի՞նչ կ'աւելանար աղքատ քուրտին, եթէ մէկն այդ հարցներ: Նրան մի քանի կոպեկ սեւ փող էր հարկաւոր, առաւ դուրս եկաւ:

Ստաւ ուրիշ բակ: Պատրաստուում էր դարձեալ իւր պարն սկսելու, երբ մէկը հարցրեց.

- Ո՞րտեղացի ես, տղայ:
- Սասունիցն, աղա:
- Հապա ո՞ւր ես եկել:
- Ես չորան էի, աղա, թուրքեր մեր գեղ քանդեցին... իմ ոչխար լէ թալլեցին...

Նա բաց արաւ կռան տակը, որտեղ երեւում էր խանչալի տուած լայն վերքի սպին, քուլոգ վերցրեց, ցոյց տուեց գլխի պատռուածք, երեւի դրանով ուզում էր ասել, թէ հեշտ չի տեղի տուել թշնամուն, եւ դարձեալ ծածկելով՝ սկսեց իւր սրինգն ածել ու պարել: - Կտիէ Էթը Սասուն փափա: (Ո՞ւր է Սասուն, հայր),- հօրը փարելով, հարցրեց օրիորդը:

- Էթը թամ...տալիքօ: (Ան այդտեղ է ... հեռու),- ձեռք թափ տալով իբրեւ պատասխանեց հայրը եւ շարունակեց «ոկնջտալով» նայել աղքատ սրնգահարին, որ զանազան ոստումներ ու ծամածռութիւններ անելով, պար էր գալիս ներքեւ՝ բակում:

Չուարթ էր նրա սրնգի ձայնը, պարի եղանակը, աշխոյժ էր եւ պարը, միայն տխուր էին նրա թուխ, կրակոտ աչքերը, որ երբեմնակի նայում էին վերեւ...

Եւ այսպէս պար էր գալիս հայրենիքից հալածուած, ոչխարը խլած Սասունի լեռների հովիւը: Նրա հնամաշ շորերի ծործորը թռչկոտելով դիպչում էին բարձր ազդրերին ու բաց սրունքներին՝ յօրինելով մի ցաւալի տեսարան:

ՄԻՋԱԶԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԶԱՐԼԶ ՏԻԶԸՆԶ (1812-1870)

Զարլզ Տիքընզ ստեղծագործեց ժամանակաշրջանի մը ընթացքին, երբ մարդուն եւ երեխային արժեքը ոտնակոխած էր: Երեխան կը շահագործէին ու կ'աշխատցնէին երկար ժամեր: Ան նորավէպի մասնագետ էր, ընկերային քննադատ մը: Իր երկերով քննադատեց այն ատենուան բրիտանական ընկերութիւնը, որ մէկ նմոյշն էր Արեւմուտքի ընկերութեան: Ճարտարարուեստի յեղափոխութիւնը նսեմացուցած էր մարդուն արժեքը: Նաեւ կային անխիղճ մարդիկ, որոնք կը շահագործէին երեխաները: Չանոնք կ'աշխատցնէին երկար ժամեր անմարդկային գործերու մէջ: Այս մութ իրականութիւնն է որ ներկայացուց Տիքընզ իր երկերուն մէջ: Տեղ մը բան մը պետք է փոխուէր: Այս էր դերը գրողին Վիքթորիանական Բրիտանիոյ ժամանակաշրջանին:

Ծնած է Պորլմըք քաղաքին մէջ: 12 տարեկանին ստիպուեցաւ ձգել դպրոցը, ապա դպրոց վերադարձաւ ու դարձաւ լրագրող: Հրապարակեց պարբերաթերթ մը 20 տարուան ժամանակամիջոցի մը ընթացքին:

Դարձաւ ընկերային համակարգի քննադատ մը. իր «The Pickwick Papers» եւ «A Christmas Carol» երկերը կը ներկայացնեն քննադատութիւն մը այդ ժամանակաշրջանի մարդոց մտածելակերպին: Իսկ «Oliver Twist» եւ «Great Expectations» երկերը կը քննադատեն այդ ժամանակաշրջանին երեխաներու շահագործումը:

Տիքընզի դասական բարոյականութեան պատմութիւնը սովամահ որբի մը մասին, որ յայտնուած է բարիի եւ չարի հակառակ ուժերու միջեւ, Վիքթորիանական Անգլիոյ աղքատութեան օրէնքներու մեղադրանք մըն է: Մռայլ ծիծաղը կը միանայ Օլիվըր Թուիսթի, Ֆեգինի, Նենսիի, Պիլ Սայքսի եւ Հնարամիտ Տոճըրի անմոռանալի դերասանական կազմով, Տիքընզի երկրորդ վէպը ազդեցիկ ընկերային երգիծանք է, որ հանրաճանաչ մնացած է 1837-39 թուականներէն ի վեր:

ՊՐԻՍՏԱԿ



ԱՓՐԻԿԵԻ ԶՈՆՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԲԱԺԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԴԱՐՁ

2ԱՄԱԼԷՔ ՇԱՅԵՑԱԲ ՏԻՏՐՈՍԸ

Տեղի ունեցավ Ափրիկեի ֆուտբոլի աֆրոմաների երկրորդ մրցաշարի՝ Զոնֆետերասիոնի բաժակի աւարտական փուլի դարձի մրցումը Մարոքի «Պըրքան»-ին եւ Եգիպտոսի «Չամալէք»-ի միջեւ: «Պըրքան» երթի մրցումին յաջողած էր մէկ կողի տարբերութեամբ: Ուրեմն «Չամալ-



լէք» իր դատին վրայ պէտք է յաղթեր երկու կողի տարբերութեամբ: Հաւասարակշռուած մրցումի 23-րդ վայրկեանին կիսապաշտպան Ահմատ Համտի Նշանակեց «Չամալէք»-ի կողը, կիսապաշտպան Չիզդի փոխանցումով: Մըրցումը աւարտեցաւ «Չամալէք»-ի մէկ կողով յաղթանակով, խումբերը հաւասարեցան ընդհանուր արդիւնքով ու «Չամալէք» յաղթեց օտար դաշտի վրայ Նշանակած կողով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Չամալէք (Եգ.) - ՖՍՊ Պըրքան (Մար.) 1-0, երթ. 1-2
Ափրիկեի Զոնֆետերասիոնի բաժակի մրցաշարքը սկսած է 2004 թուականին: Անոր գումումի մրցումներուն կը մասնակցին Ափրիկեի ֆուտբոլի ֆետերասիոնի անդամ երկիրներու 59 ակումբներ: Տիտղոսը շահած են Թունուզի «Ալ Սաֆաքսի»-ն՝ 3 անգամ, Մարոկի «ՌՍՊ Պըրքան», «Ռաժա Զապալանքա», Թունուզի «Նըժմէթ Ալ Սահէլ», Դեմ.Զոնկոյի «ԹՓ Մազեմպէ», Եգիպտոսի «Չամալէք»՝ 2-ական անգամ ու ուր այլ ակումբներ մէկական անգամ:

ՄՊԱՆԻՅՈՅ ԱՆՈՅՏԵՆՈՒԹԵԱՆ 37-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆ ՌԵԱԼ ՍՈՍԻԵՏԱՏ ՅԱՂԹԱԿԱՆ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան խախմբերէն՝ 37-րդ հանգրուանին, ախոյեա «ՌԵԱԼ Մատրիտ» իր դաշտէն դուրս ուր կողոնց մրցումի մը ընթացքին հաւասարեցաւ 8-րդ դիրքը գրաւող «Վիլարեալ»-ի հետ: «Վիլարեալ»-ի նորվէկիացի ռմբարկու Սեօրլոթ Նշանակեց չորս կող եւ գրաւեց ռմբարկուներու առաջին դիրքը: «ՌԵԱԼ Մատրիտ» կողերը Նշանակեցին թուրք յարձակող Կիւլեր՝ երկու կող, յարձակող Խոսելու՝ մէկ կող եւ կիսապաշտպան Լուքաս Վասքեզ՝ մէկ կող: Իսկ հայազգի կիսապաշտպան Արսեն Չախարեանի մաս կազմած 6-րդ դիրքը գրաւող Սան Սեպասթիանի «ՌԵԱԼ Սոսիետատ»-ը իր դաշտէն դուրս յաղթեց 7-րդ դիրքը գրաւող Սեփյայի «ՌԵԱԼ Պեթիս»-ին ու ամրապնդեց իր դիրքը: Չախարեան դաշտ մտաւ 81-րդ վայրկեանին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Վիլարեալ - ՌԵԱԼ Մատրիտ 4-4
- Վալենսիա - Ժիրոնա 1-3
- Աթլէթիք Պիլլաո - Սեփյա 2-0
- Աթլէթիքո Մատրիտ - Օսասունա 1-4
- Պարսելոնա - Ռաջօ Վալթեանօ 3-0
- ՌԵԱԼ Պեթիս - ՌԵԱԼ Սոսիետատ 0-2
Դասաւորում. 1) ՌԵԱԼ Մատրիտ 94 կէտ 87-26, 2) Պարսելոնա 82 կէտ 77-43, 3) Ժիրոնա 78 կէտ 78-46, 4) Աթլէթիքո Մատրիտ 73 կէտ 68-43, 5) Աթլէթիք Պիլլաո 65 կէտ 60-37, 6) ՌԵԱԼ Սոսիետատ 60 կէտ 51-37
Ռմբարկուներ. 1) Ա. Սեօրլոթ - Վիլարեալ 23 կող, 2) Ա. Տովալիք - Ժիրոնա 21 կող, 3)Ճ.Պելլիսկիեմ - ՌԵԱԼ Մատրիտ 19 կող

ԻՏԱԼԻՅՈՅ ԱՆՈՅՏԵՆՈՒԹԵԱՆ 37-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆ ԵՆՎԵՆԹԻՄ ՀԱՄԱԱՐԵՑԱԲ

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան խախմբերէն՝ 37-րդ հանգրուանի մրցումներուն, 4-րդ դիրքը գրաւող «Եուվենթիս» իր դաշտէն դուրս հաւասարեցաւ 3-րդ դիրքը գրաւող այս տարուան անակնկալ «Պոլոնիա»-ին հետ ու պահեց իր դիրքը: Իսկ ախոյեան «Ինթեր Միլան» իր դաշտին վրայ հաւասարեցաւ 7-րդ դիրքը գրաւող «Լացիօ Ռոմա»-ի հետ: Հենրիխ Միխթարեան «Ինթեր Միլան»-ի հիմնական կազմին մէջն էր ու փոխարինուեցաւ 64-րդ վայրկեանին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ինթեր Միլան - Լացիօ Ռոմա 1-1
- Թորինօ - ԱՍ Միլան 3-1
- Պոլոնիա - Եուվենթիս 3-3
- Լեչչէ - Աթալանթա 0-2
- Ռոմա - ճենովա 1-0
- Ֆիորենթինա - Նափոլի 2-2
Դասաւորում. 1) Ինթեր Միլան 93 կէտ 87-20, 2) ԱՍ Միլան 74 կէտ 73-46, 3) Պոլոնիա 68 կէտ 54-30, 4) Եուվենթիս 68 կէտ 52-31, 5) Աթալանթա 36 մ 66 կէտ 67-39, 6) Ռոմա 63 կէտ 64-44
Ռմբարկուներ. 1) Լ. Մարթինէզ - Ինթեր Միլան 24 կող, 2) Տ. Վալհովիչ - Եուվենթիս 16 կող, 3) Վ. Օսիմիեն - Նափոլի 15 կող

ԱՅՍՕՐՈՒՄՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

ԻՐՈՒՓԱ ԼԻԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ
22:00 Աթալանթա (19) - Պայեր Լեվերքուզըն (13)
ԱՐՏԱՆԹԵՆԻ ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ՄԱՐՏԱԿԱՆ
03:10 Աթլէթիքո Թուքուման (13) - Ժիմնազիա Լա Փլաթա (5)

ՊԱՍԵԹՊՈԼԻ ԷՆ.ՊԻ.ԷՅ.-Ի ՇՐՏ. ՓԼԵՅ-ՕՖ
03:30 Միլնետոթա Թիմպըրվուվզ (3) - Տալաս Մեվրիքս (5)
ԹԵՆԻՍԻ ԺԸՆԵԻ ՄՐՏ. 1/8-ՐԴ ՄԱՐՏԱԿԱՆ
11:00-Էս սկսեալ, «beinsports» կայանէն
ՀԵՏԵԼԱՐՇԱԲ
14:30 Giro D'Italia շրջավազը, «eurosport» կայանէն

ՊԱՍԵԹՊՈԼ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅՏԵՆՈՒԹԻՄ ՌԻԱՏԻ ՇԱՅԵՑԱԲ ՏԻՏՐՈՍԸ

Շաբթուան սկիզբը շարունակուեցան Լիբանանի պասքեպոլի ախոյեանութեան աւարտական փուլի մրցումները: «Ռիատի Պէյրութ» մրցեցաւ «Հըքմէ»-ի դէմ փլէյ-օֆի հինգերորդ մրցումին ու յաղթանակ տարաւ: «Ռիատի»-ի ամենալաւ Նշանակողն էր ամերիկացի ճոնաթան Սիմընզ՝ 28 կէտ, 5 ռիպաւունտ, 2 փոխանցում: Իսկ «Հիքմէ»-ի



ամենալաւ Նշանակողն էր ճոնաթան Կիպսըն՝ 27 կէտ, 2 ռիպաւունտ, 2 փոխանցում: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.
- Ռիատի Պէյրութ (1) - Հըքմէ (3) 113-97
Այս արդիւնքով, «Ռիատի Պէյրութ» յաղթեց 4-1 մրցումներու հաշիւով ու դարձաւ Լիբանանի ախոյեան չորրորդ տարին անընդմէջ:

ՍԱՌԻ ՀՈՔԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅՏԵՆՈՒԹԻՄ ԳԱՆԱՏԱ ՅԱՂԹԵՅ ԶԵՆԻԱՅԻՆ

ԶԵՆԻՈՅ Փրակա եւ Օսթրաւա քաղաքներու մարզադաշտերուն վրայ շարունակուեցան սառի հոքիի աշխարհի ախոյեանութեան մրցումները: Մասնակցող 16 հաւաքականները բաժնուած են երկու խմբակի: Իւրաքանչիւր խմբակի առաջին 4 դիրքերը գրաւած խումբերը պիտի անցնին քառորդ աւարտական փուլ: Ա. խմբակի վերջին մրցումին, առաջատար Գանատա ամրապնդեց իր դիրքը յետ երկարածգումի յաղթելէ ետք կազմակերպիչ երկրի՝ ԶԵՆԻՈՅ իւսաւքականին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

Ա. խմբակ. - Ֆիլիստա - Դանիա 3-1
- Աւստրիա - Բրիտանիա 2-4
- Գանատա - ԶԵՆԻԱ 4-3
Դասաւորում. 1) Գանատա 7 մ 19 կէտ 32-18, 2) ԶԵՆԻԱ 7 մ 16 կէտ 26-14, 3) Չուիցերիա 6 մ 14 կէտ 26-11, 4) Ֆիլիստա 6 մ 10 կէտ 20-11
Բ. խմբակ. - Ղազախստան - Լեհաստան 3-1
- Ֆրանսա - Գերմանիա 3-6, - Լաթվիա - ԱՄՆ 3-6
Դասաւորում. 1) Շուէտ 6 մ 18 կէտ 29-8, 2) ԱՄՆ 7 մ 16 կէտ 37-16, 3) Գերմանիա 7 մ 15 կէտ 34-24, 4) Սլովաքիա 6 մ 12 կէտ 25-17

ԱՅԼԵԹԻՉՄ ՄՐԱՄԱՆԴԵ ԼԻԿԱՅԻ ՈԱՊԱԹԻ ՄՐՅՈՒՄ ՍԵՐԿՈՏԻՉՈ ԵՒ ԱԼ ՊԱՐԵԱԼԻ ՅԱՂԹԵՅԻՆ

Շարունակուեցան աթլէթիզմի առաջնակարգ մրցաշարքի՝ Ադամանդէ լիկայի 2024 տարուան մրցումները: Տեղի ունեցած չորրորդ հանգրուանի՝ Մարոքի Ռապաթի մրցումին, կիներու 800 մետր վազքի մրցումին արձանագրուեցաւ այս տարուան ամենալաւ ժամանակը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.



Կիներ.
-200 մետր վազք. 1) Շերիքա Ճէքսըն-ճամ. 22.82 երկվ.
-800 մետր վազք. 1) Փրիտլըն Սեքլոտիգօ-Հար.Ափր. 1:57.26 վրկ. աա
-5000 մետր վազք. 1) Մետինա Էյազ-Եթով. 14:36.16 վրկ.
-400 մետր արգելարշաւ. 1) Ռաշըլ Զլէթըն-ճամ. 53.98 երկվ.
-Բարձրցատկ. 1) Անժելինա Թոփիչ-Սրպ. 1.98 մետր
-Ձողափայտով ոստում. 1) Անժելիքա Մոզըր-Չուից. 4.73 մետր
-Գունը. 1) Զէյա Ճէքսըն-ԱՄՆ 20.00 մետր
Տղաք.
-100 մետր վազք. 1) Էմմանուէլ Էգեմէ-Զամբուն 10.11 երկվ.
-400 մետր վազք. 1) Ալեքսանտր Տոււ-Պլճ. 44.51 երկվ.
-800 մետր վազք. 1) Էմմանուէլ Ուանիոնյի-Բեն. 1:43.84 վրկ.
-1500 մետր վազք. 1) Իզզըտտին Հապզ-Ֆր. 3:32.86 վրկ.
-3000 մետր արգելարշաւ. 1) Սուֆիան Ալ Պաքքալի-Մար. 8:09.40 վրկ.
-Եռաքայլ ոստում. 1) Լազարո Մարթինէզ-Թուպա 17.10 մետր
-Սկաւառակ. 1) Միքոլաս Ալեքսա-Լիթ. 70.70 մետր

NOR SEROUNT
Armenian Cultural Association

ՀՈՐ ՄԵՐՈՒՆԴ
Մշակութային Միութիւն

AREK
DANCE TROUPE

Ծոյոյն ԱՐԵԳՍԿ

ՈՒՐԲԱՐ	ՀԱՐԱՐ	ԿԻՐԱԿԻ
31	1	2
ՄԱՅԻՄ	ՅՈՒՆԻՍ	ՅՈՒՆԻՍ
8:30	8:30	4:30
	(GALA)	

ՄԻՆ ԷԼ ՖԻԼԻ ԲԱՂԱԲԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՐԱՀ

Գեղարուեստագէտ Դերան	ԳԱՐԼՈ ՄԵՐԵԴԵԱՆ
ARTISTIC CHOREOGRAPHER	CARLO METREBIAN
Փոքրու եւ Պարսկական Պարայի	ԳՈՀԱՐ ՏԵՄԻՐՅԵԱՆ - ԳԱՄԱՐԵԱՆ
TEENAGERS CHOREOGRAPHER	KOHAR DEMIRJIAN-KASBARIAN

TICKETS DONIGUAN BOOK STORE - Mar Mekhael, STUDIO VATCHE - New Hadjen, SALON RAZMIG - Antelias, LIBEIRUT CELL - Badawi street, or from the ticketing desk on the days of the performance.

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՐԱՆԻ ՄԷՋ

(Ճարունակուած Ա. Էջնի)

Կազայի մէջ գործող Համասի կառավարութեան առողջապահութեան նախարարութիւնը յայտարարեց, թէ իսրայէլեան յարձակումներուն հետեւանքով զոհուած պաղեստինցիներուն թիւը բարձրացած է առնուազն 35,650-ի, իսկ վիրաւորներուն թիւը՝ 80 հազարի: Ըստ նախարարութեան, անցնող ժամերուն մահացած է 85 հոգի, աւելի քան երկու հարիւր վիրաւորի կողքին:

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԸՆԴԴԵՍ ՄՈՍԿՈՒՅԻ

Եւրոմիութիւնը պաշտօնապէս որոշեց Եւրոպայի մէջ Ռուսիոյ կեդրոնական դրամատան սառած աւանդներուն շահոյթը տրամադրել Ուքրանիան զինելու ջանքերուն, թէւ Միացեալ Նահանգներ ճնշում կը բանեցնէ՝ Ռուսիոյ



դէմ աւելի ընդարձակ ծրագիր մը գործադրելու ուղղութեամբ: Եւրոմիութիւնը կը յուսայ, որ այս ձեւով տարեկան 3,3 միլիարտ տոլար ապահովուի ուքրանացիները զինելու համար, մինչ Զիւլի բանակը այս փուլին դժուարութիւն կ'ունենայ զսպելու ռուսական յարձակումներն ու յառաջընթացը: Այսուհանդերձ, ուքրանական բանակը երկ յայտարարեց, թէ կործանած է Դրիմի մէջ մնացած ռուսական հրթիռային վերջին մարտասաւը: Իսկ Ռուսիոյ պաշտպանութեան նախարարութիւնը միւս կողմէ յայտարարեց իլլէական մարտավարական զենքերով զինավարժութիւն կատարելու մասին, առ ի հակադարձութիւն արեւմուտքի բազմացող սպառնալիքներուն:

www.araraddaily.com

BOGHOS OPTIC

Autoroute Jdeideh,
Tel.: 01-870016

ARARAD DAILY NEWSPAPER
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية | المحبرة المسؤولة: أني صرافيان
تصدر عن شركة ماسيسر للمباعة والنشر (ش.م.م.)